## Հիշե՛ք

- Երեխայի ապրուստադրամ վճարելու վերաբերյալ դատարանի որոշումը գործում է բանտում կամ կալանավայրում Ձեր գտնված ժամանակ, քանի դեռ դատարանն այն չի վերանայել: Եթե Դուք բանտում կամ կալանավայրում եք, անմիջապես կապ հաստատեք Ձեր գործով զբաղվող երեխաների օգնության տեղական գործակալության հետ:
- Երեխայի ապրուստադրամ վճարելու մասին դատարանի որոշումն ինքնաբերաբար չի փոխվում և չի կարող կայացվել հետին թվով՝ այն օրվանից, երբ փոփոխություն է տեղի ունեցել Ձեր եկամուտի մեջ, ուստի Ձեզ հարկավոր է գործել առանց հապաղելու:
- Չվճարված ապրուստադրամի վրա տոկոս է ավելանում՝ որպես տույժ:

Այսօր զանգահարեք կամ գրեք երեխաների օգնության Ձեր տեղական գործակալություն:

Դա կարող է խնայել Ձեր դրամը:


*Առնոլդ Շվարցենեգեր*, Կալիֆոռնիա նահանգի նահանգապետ

*Քիմբերլի Բելշե*, Կալիֆոռնիայի առողջապահության և սոցիալական ծառայությունների գործակալության քարտուղար

*Դեյվիդ Մաքսվել-Ջոլլի*՝, երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտի տնօրեն

1-866-249-0773 (անվճար)
*www.childsup.ca.gov*


PUB 248 (9/08)

Օգնություն Կալիֆոռնիայի երեխաներին

# Երեխաների ապրուստադրամի վերաբերյալ տեղեկություններ բանտում կամ կալանավայրում գտնվող ծնողների համար

Երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտ

## Ի՞նչ անել, եթե երեխայի ապրուստադրամի վերաբերյալ փաստաթղթերը ես ստանում եմ բանտում կամ կալանավայրում:

Փաստաթղթերը ստանալուն պես կապ հաստատեք դրանց վրա նշված երեխաների օգնության տեղական գործակալության հետ: Դա կարող է արվել հեռախոսով կամ նամակով: Դատարանին պատասխանելու համար Դուք ընդամենը 30 օր ունեք՝ փաստաթղթերը ստանալու օրվանից հաշված:

Եթե հայրությունը հաստատված չէ, և Դուք համարում եք, որ Դուք չեք երեխայի հայրը, կարելի է ստուգում կատարել, անգամ եթե Դուք բանտում կամ կալանավայրում եք: Արյան հետազոտություն չի պահանջվում, և ստուգումը կարող է կատարվել արագ և առանց ցավի: Արդյունքների մասին Ձեզ նամակով տեղյակ կպահվի:

## Ես երեխայի ապրուստադրամ պե՞տք է վճարեմ, բանտում կամ կալանավայրում գտնված ժամանակ

Այո, դատարանի որոշումից հետո Դուք պետք է ապրուստադրամ վճարեք: Որոշումը փոխելու համար հարկավոր է գործել առանց հապաղելու: Բանտում կամ կալանավայրում գտնվելը Ձեզ ինքնաբերաբար չի ազատում Ձեր երեխաների նկատմամբ ունեցած Ձեր պարտականություններից: Եթե Դուք երեխաների ապրուստադրամը չվճարեք, չվճարված գումարին տոկոս կավելանա՝ որպես տույժ:

## Ի՞նչ է վերանայումը

Վերանայում նշանակում է Ձեր վճարելիք ապրուստադրամի չափի փոփոխություն:

## Ինչպե՞ս կարող եմ փոխել դատարանի որոշումը

Դիմեք երեխաների օգնության տեղական գործակալությանը, որը կիրարկում է Ձեր վերաբերյալ դատարանի որոշումը: Ասացեք նրանց, որ Դուք բանտարկված եք և Ձեզ հարկավոր է վերանայել դատարանի որոշումը: Նրանք կվերանայեն Ձեր գործը և կհայտնեն Ձեզ արդյունքների մասին:

## Երեխայի ապրուստադրամ վճարելու փոխարեն կարո՞ղ եմ ես բանտում իմ պատիժը կրել

Ոչ: Բանտում անցկացրած ժամանակի դիմաց Դուք չեք կարող ազատվել երեխայի ապրուստադրամը վճարելու պարտականությունից և չեք կարող պատիժ կրել ապրուստադրամ վճարելու փոխարեն:

## Որքա՞ն տոկոս է ավելանում չվճարված գումարի վրա

Կալիֆոռնիայում գործող տոկոսադրույքը տարեկան 10% է, որն ամեն ամիս ավելացվում է ապրուստադրամի չվճարված մասին:

## Ես կկարողանա՞մ այցելել իմ երեխային բանտից ազատվելուց հետո

Երեխայի խնամակալության և այցելությունների վերաբերյալ որոշումները կայացվում են դատարանի կողմից: Եթե երեխային տեսնելու հետ կապված խնդիրներ կան, ընտանեկան օրենքի խորհրդատուն կարող է Ձեզ ուղարկել այնպիսի մեկի մոտ, որը կօգնի Ձեզ: Ընտանեկան օրենքի խորհրդատուն անվճար իրավաբանական օգնություն է տրամադրում երեխաների խնամքի հետ կապված հարցերում: Դուք կարող եք նաև օգտվել մասնավոր փաստաբանի ծառայություններից:

## Կալանավայրից ազատվելուց հետո ես պե՞տք է կապ հաստատեմ իմ գործով զբաղվող երեխաների օգնության տեղական գործակալության հետ

Այո: Դուք պետք է Ձեր գործով զբաղվող երեխաների օգնության տեղական գործակալությանը հայտնեք Ձեր հասցեում, աշխատանքում կամ եկամուտի մեջ տեղի ունեցած փոփոխությունների մասին:

*Կալիֆոռնիայի երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտը իրավաբանական ծառայություններ չի տրամադրում ծնողներին կամ խնամակալներին:*